ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՆԱ ՄԻՍԱԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԵՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՍԿՈՒՐՍԸ

ԻԳ.00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2024

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

СОНА МИСАКОВНА МХИТАРЯН

ДИСКУРС ОБЩЕЕВРОПЕЙСКИХ ПАРЛАМЕНТСКИХ ПАРТИЙ О ПРОГРАММЕ ВОСТОЧНОГО ПАРТНЕРСТВА ЕС

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

Ереван-2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Գարիկ Միշայի Քեռյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Արթուր Վլադիմիրի Աթանեսյան**
քաղաքական գիտությունների թեկնածու
Նարեկ Արմենի Սուքիասյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2024 թ. սեպտեմբերի 20-ին, ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում: Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2024 թ. օգոստոսի 8-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
քաղաքական գիտ. թեկնածու Գ. Է. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: доктор политических наук,
профессор **Г. М. Керян**

Официальные оппоненты: доктор политических наук, профессор **А. В. Атанесян**
кандидат политических наук **Н. А. Сукиасян**

Ведущая организация: Российско-Армянский университет

Защита состоится 20 сентября 2024 г. в 13:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 8 августа 2024 г.
Научный секретарь специализированного совета,
кандидат политических наук Г. Э. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ներկայիս աշխարհաքաղաքական վերափոխման արդյունքում ԵՄ Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱլԳ) ծրագիրը թևակոխում է մի նոր փուլ՝ ազդեցություն թողնելով ԵՄ և ԱլԳ անդամ երկրների հարաբերությունների, տարածաշրջանային անվտանգային հարացույցների և ծրագրի անդամ երկրների քաղաքատնտեսական բարեփոխումների հայեցակարգի վրա: Վերոնշյալ վերափոխումն առաջ է բերում ծրագրի խորքային ուսումնասիրության մի նոր հրամայական, որը գիտական համայնքի ուշադրությունն է հրավիրում ոչ միայն ծրագրի մակրոքաղաքական զարգացումների, այլև ծրագրի զարգացումն ու վերափոխումը խթանող այլ միկրոքաղաքական միավորների, ներառյալ համաեվրոպական կուսակցությունների դերակատարման վրա:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է մի քանի գործոններով: Հաշվի առնելով, որ «Արևելյան գործընկերություն» ծրագիրը գործում է արդեն տասնհինգ տարի, ծրագրի հաջողությունների, ձախողումների, վերափոխման ու վերանայման անհրաժեշտության շուրջ ծավալված փորձագիտական ու ակադեմիական բանավեճերն ու իրականացված հետազոտությունները թույլ են տալիս նորովի բացահայտել ԱլԳ-ի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև ԱլԳ-ի կայացման և ներկայիս զարգացման առանձնահատկությունները: Եվ քանի որ ԱլԳ-ն թևակոխել է նոր փուլ, և այդ ժամանակաշրջանը համընկնում է ԱլԳ անդամ երկրներում ներքաղաքական վերափոխումների, ինչպես նաև ԱլԳ տարածաշրջանում աշխարհաքաղաքական տարբեր կենտրոնների ինտենսիվ մրցակցության հետ, տվյալ համատեքստում ավելի է կարևորվում թեմայի հետազոտությունը:

ԱլԳ ծրագիրն ունի առանձնահատուկ դերակատարում ներկայիս ԵՄ-Հայաստան հարաբերությունների շրջանակում և գտնվում է ինչպես եվրոպական, այնպես էլ հայաստանյան ակադեմիական հանրույթի ուշադրության կենտրոնում: Չնայած ԱլԳ ծրագիրը բախվել է մի շարք մարտահրավերների, այնուամենայնիվ Հայաստանն ընդգծել է, որ ԱլԳ «ձևաչափը պետք է շարունակի գործել, այն չպետք է փոխարինվի որևէ այլ նախաձեռնությամբ կամ սահմանափակի որևէ այլ համաեվրոպական ձևաչափում ներգրավվելու հնարավորությունը»[1] ի ցույց դնելով ներկայիս արտաքին քաղաքական իրավիճակում ԱլԳ ծրագրի կարևորությունը Հայաստանի համար: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև հանրային կարծիքի տվյալներով, ըստ որի՝ 2023 թ. ՀՀ քաղաքացիների երեք քառորդը դրական է գնահատել ՀՀ-ԵՄ

[1] ՀՀ ԱԳՆ, ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Պ. Հովհաննիսյանի ելույթը ԵՄ Արևելյան գործընկերության արտաքին գործերի նախարարների հանդիպմանը, 12 դեկտեմբեր 2022: https://www.mfa.am/hy/speeches/2022/12/12/easternp_meeting/11780 (վերջին մուտք՝ 25 հուլիս 2023):

հարաբերությունները[2]՝ այսպիսով շեշտադրելով տվյալ հարաբերությունների խորքային հետազոտության անհրաժեշտությունը:

Մի շարք գիտնականներ, ինչպես Հ. Լարսենը[3], Ք. Նիտոյուն ու Ն. Տոմիչը[4] և այլք դիսկուրսիվ տեսանկյունից ԵՄ արտաքին քաղաքականության, մասնավորապես եվրոինտեգրման ուսումնասիրումը համարում են անբավարար և ոչ համակարգված՝ չնայած որ տվյալ վերլուծությունների համար առկա են լայն հնարավորություններ, ինչը ավելի է ընդգծում հետազոտության թեմայի կարևորությունը:

Մյուս կողմից, հետազոտության արդիականությունը պայմանավորված է համաեվրոպական կուսակցությունների՝ ԵՄ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործում կարևոր դերակատարմամբ և ԱլԳ անդամ երկրների քաղաքական կուսակցությունների հետ տվյալ քաղաքական միավորների քիչ ուսումնասիրված ավելի քան տասնամյա համագործակցությամբ: Չնայած որ համաեվրոպական կուսակցությունները ՀՀ կուսակցական համակարգի այդպիսի միակ արևմտյան քաղաքական գործընկերներն են, այնուամենայնիվ հաշվի առնելով տվյալ դերակատարների՝ ԱլԳ տարածաշրջանում գործունեության շուրջ ուսումնասիրությունների սակավաթվությունը՝ հետազոտության թեմայի ուսումնասիրությունն ավելի քան արդիական է:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության *օբյեկտը* «Արևելյան գործընկերություն» ծրագրի շուրջ դիսկուրսն է՝ որպես ԵՄ դերակատարների արտաքին քաղաքականության բաղադրիչ: Հետազոտության *առարկան* համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսն է՝ որպես այդ ծրագրի համատեքստում տվյալ կուսակցությունների քաղաքական և կուսակցական գործունեության դրսևորման անքակտելի մաս:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության **նպատակը** «Արևելյան գործընկերություն» ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսի առանձնահատկությունների քննությունն է: Այս նպատակն իրագործելու համար տվյալ ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- վերլուծել համաեվրոպական կուսակցությունների խորհրդարանական գործունեության և Եվրոխորհրդարանի (այսուհետ՝ ԵԽ) քաղաքական խմբակցությունների ձևավորման գործընթացը և առանձնահատկությունները, ներառյալ համաեվրոպական կուսակցությունների

[2] Տե՛ս EU Neighbors East. Opinion poll shows rising trust for the European Union in Armenia. 15 September 2023. https://euneighbourseast.eu/news/publications/annual-survey-2023-armenia/ (last access 25 December 2023).

[3] Տե՛ս Larsen H. Discourse analysis in the study of European foreign policy // Rethinking European Union Foreign Policy, Manhcester University Press, 2004, p. 79.

[4] Տե՛ս Nitoiu C. and Tomic N (Eds.). Europe, discourse and Institutions: challenging the mainstream in European studies, Routledge, 2014, p. 13.

դերակատարումը ԵՄ արտաքին քաղաքական որոշումների ընդունման ու իրականացման գործընթացներում՝ շեշտադրելով ԱԼԳ ծրագրի համատեքստը,

- վեր հանել «Արևելյան գործընկերություն» ծրագրի կայացման ու զարգացման առանձնահատկությունները քաղաքական, խորհրդարանական և դիսկուրսիվ մակարդակներում,
- ուսումնասիրել համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱԼԳ ծրագրի շուրջ դիսկուրսի համատեքստը և այդ դիսկուրսի ձևավորման առանձնահատկությունները՝ աշխարհաքաղաքական, ժամանակագրական, արժեքային-գաղափարական և քաղաքական ասպեկտների շեշտադրմամբ,
- վեր հանել արտաքին քաղաքական, քաղաքական և կուսակցական իրողությունները, որոնք կարևոր դեր են խաղացել վերոնշյալ կուսակցությունների՝ ԱԼԳ ծրագրի շուրջ դիսկուրսում տեղ գտած շեշտադրումներում,
- քննել համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսիվ մոտեցումը Հայաստանի և ԼՂ հիմնախնդրի շուրջ:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Համաեվրոպական կուսակցությունների ձևավորման ժամանակաշրջանից՝ քսաներորդ դարի սկզբից ի վեր, տվյալ քաղաքական միավորների դերակատարումն ու գործունեությունն եղել են արևմտաեվրոպական գիտական համայնքի հետազոտության կարևոր առարկան: 80-ական թթ. ի վեր և հատկապես 2010-ական թթ. իրականացված ԵՄ կարգավորումների արդյունքում քաղաքական համակարգի վերոնշյալ տարրերի շուրջ ուսումնասիրությունները սկսում են անդրադառնալ կուսակցությունների ոչ միայն վերազգային կազմակերպական առանձնահատկություններին, այլև ԵՄ համակարգում տվյալ միավորների իրավական կարգավիճակի, ֆինանսական հաշվետվողականության և ներքին կուսակցական ժողովրդավարության հայեցակարգերին:

ԵՄ ընդլայնմանը զուգահեռ վերոնշյալ կուսակցությունների խորհրդարանական և արտախորհրդարանական գործունեությունն ի հայտ է բերում գիտական նոր հիմնախնդիրներ, այն է՝ տվյալ քաղաքական միավորների՝ որպես ԵՄ արտաքին քաղաքական դերակատարների ազդեցության և գործառնության ուսումնասիրությունը: Վերոնշյալ հիմնախնդիրների քննության համար հիմք են հանդիսացել նորագույն շրջանի այնպիսի կարևոր ուսումնասիրություններ, ինչպիսինն են Լ. Բարդիի[5], Է. Բրեսանելիի[6], Ռ. Կացի ու

[5] Տես Bardi L., Gagatek W. The European ambition: the group of the European People's Party and European Integration. Baden-Baden, Nomos, 2020; Bardi L., Bressanelli E. How to create a Transnational party system. Study. Policy department of Citizens' rights and constitutional affairs, European Parliament, EUDO Report, Florence, 2010.

[6] Տես Bressanelli E. Europarties after enlargement: Organization, Ideology and Competition. New York, Palgrave Macmillan, 2014.

Պ. Մայերի[7], Հ. Կոստանյանի ու Բ. Վանդեկաստիլի[8], Ս. Ռուսակի[9] և այլոց աշխատությունները: ԱլԳ ծրագրի մեկնարկից ի վեր կուսակցությունների՝ ԵՄ արտաքին քաղաքականության շրջանակում ուսումնասիրությունն ի հայտ է բերում նոր հետազոտական ուղղվածություն, այն է՝ ոչ ԵՄ անդամ երկրներում և ԱլԳ տարածաշրջանում կուսակցությունների՝ որպես ԵՄ շահերի, եվրոպական քաղաքական մշակույթի ու ժողովրդավարական նորմերի խթանիչների դիտարկումն ու վերլուծությունը: Այս համատեքստում հատկապես առանձնանում են Ա. Քրիսոգելոսի[10] աշխատությունները: Միևնույն ժամանակ, ԱլԳ ծրագրի կայացման շրջանում գիտական հանրույթը ուշադրություն է դարձնում նաև համաեվրոպական կուսակցությունների դերակատարմանը ԱլԳ տարածաշրջանում, սակայն այդպիսի հետազոտությունները սակաթիվ են ու անդրադառնում են հիմնականում համաեվրոպական կուսակցությունների և ԱլԳ տարածաշրջանի կուսակցությունների համագործակցության առանձնահատկություններին ու զարգացման հեռանկարներին: Տվյալ շրջանի ուսումնասիրություններում շեշտադրվում է վերոնշյալ կուսակցական համագործակցության ազդեցությունը ԱլԳ անդամ երկրների, մասնավորապես Ուկրաինայի, Մոլդովայի և Վրաստանի կուսակցությունների գաղափարախոսության, կազմակերպական մակարդակի և քաղաքական վարքագծի վրա: Հայաստանյան գիտական համայնքում նմանատիպ հետազոտությունները բացակայում են, և համաեվրոպական կուսակցությունների գործունեությունն ու ՀՀ-ում միջկուսակցական համագործակցության արդյունքներն ու հեռանկարները երբևէ որևէ համապարփակ քննության առարկա չեն եղել: Այնուամենայնիվ, համաեվրոպական կուսակցությունների հայեցակարգը համառոտ ձևով ներկայացվել է ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի կողմից հրատարակված «Եվրոպագիտություն» դասագրքում[11]:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմում են որակական վերլուծության մեթոդները, մասնավորապես փաստաթղթերի վերլուծությունը,

---

[7] Տես Katz R. S. and Mair P. Changing models of party organizations and party democracy: the emergence of the cartel party // Democracy: Critical Concepts in Political Science, 4, Routledge, 2007.

[8] Տես Kostanyan H. and Vandecasteele B. The Euronest Parliamentary Assembly: The European Parliament as a Socializer of its Counterparts in the EU's Eastern Neighborhoud? // Stavridis S. and Irrera D. (Eds.), The European Parliament and its International Relations. Abindgton, Routledge, 2015.

[9] Տե՛ս Russack S. EU parliamentary democracy: how representative? // Blockmans S. and Russack S. (Eds.), Representative democracy in the EU: recovering legitimacy. London, Rowman&Littlefield international, 2019.

[10] Տես Chryssogelos A. Transnational European Party Federations as EU foreign policy actors: The activities of Europarties in Eastern Partnership States // Journal of Common Market Studies, 55 (2), 2016; Chryssogelos A. Europarties in the neighbourhood: how transnational party politics bind Eastern Europe and Western Balkans to the EU // Comparative European politics, 19, 2021.

[11] Տե՛ս Եվրոպագիտություն (Ն. Գալստյանի խմբագրությամբ), ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Երևան, 2021, էջ 349-365:

կոնտենտ վերլուծությունը (content analysis) և քննադատական դիսկուրս վերլուծությունը (critical discourse analysis, այսուհետ՝ ՔԴՎ): Հետազոտության ընթացքում կիրառվել են նաև ինդուկցիայի, դեդուկցիայի, վերլուծության, սինթեզի, համեմատական, ռետրոսպեկտիվ և իրադարձային մեթոդները: Վերոնշյալ մեթոդաբանությունը զուգակցվել է խորին հարցազրույցների մեթոդի օգտագործմամբ, որի կիրառմամբ ատենախոսության թեմայի շուրջ հարցազրույցներ են անցկացվել յոթ տարբեր համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչների, ԵՄ քաղաքական խմբակցությունների պատգամավորների և փորձագետների հետ: Բրյուսելում կատարված դաշտային աշխատանքի արդյունքում հավաքագրված հարցազրույցները ձայնագրվել են և/կամ գրի են առնվել ու սույն ատենախոսությունում մեջ են բերվում հարցազրույցի մասնակիցների (respondent) համաձայնությամբ:

Ուսումնասիրվել են այն տասը կուսակցությունները, որոնք 2022 թ. հունվարի մեկի դրությամբ պաշտոնապես գրանցված են եղել Եվրոպական քաղաքական կուսակցությունների և եվրոպական քաղաքական հիմնադրամների մարմնում՝ որպես համաեվրոպական կուսակցություն, և այդ կուսակցությունների կողմից ձևավորված համապատասխան ԵՄ քաղաքական խմբակցությունները: Վերոնշյալ համաեվրոպական կուսակցություններն են՝ Եվրոպայի ժողովրդական կուսակցությունը (ԵԺԿ), Եվրոպական սոցիալիստների կուսակցությունը (ԵՍԿ), Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինքը (ԵԱԺԴ), Եվրոպական դեմոկրատական կուսակցությունը (ԵԴԿ), Եվրոպայի կանաչներ կուսակցությունը (ԵԿԿ), Եվրոպական ձախերի կուսակցությունը (ԵՁԿ), Եվրոպայի պահպանողականների և բարեփոխիչների դաշինքը (ԵՊԲԴ), Եվրոպական ազատ դաշինքը (ԵԱԴ), «Ինքնություն և ժողովրդավարություն» կուսակցությունը (ԻԺԿ) և Եվրոպական քաղաքական քրիստոնեական շարժումը (ԵՔՔՇ)[12]:

Հավաքագրվել և վերոնշյալ մեթոդների կիրառմամբ վերլուծվել են ԱլԳ ծրագրի մեկնարկից՝ 2009 թ. մայիս 7-ից ի վեր մինչ 2022 թ. փետրվարի 24-ը՝ ուկրաինական պատերազմի սկիզբն ընդգրկող ժամանակաշրջանի վերոնշյալ համաեվրոպական կուսակցությունների ընտրական ծրագրերը, ԱլԳ ծրագրի շուրջ արված հայտարարությունները, կուսակցության ներկա և նախկին նախագահների ու անդամների հայտարարությունները, համապատասխան ԵՄ քաղաքական խմբակցությունների պաշտոնական կայքերը և ղեկավարների, խոսնակների ու անդամների դիսկուրսները, ներառյալ Ֆեյսբուք և X (նախկինում՝ Թվիթեր) պաշտոնական սոցիալական էջերում արված գրառումները: Վերլուծության ընթացքում նաև համեմատական քննություն է անցկացվել

[12] Չնայած որ կուսակցությունը ԵՄ-ում չի ձևավորել առանձին խմբակցություն, այնուամենայնիվ հաշվի առնելով, որ կուսակցության անդամներն ընդգրկված են ԵՄ տարբեր խմբակցություններում որպես պատգամավորներ, տվյալ համաեվրոպական կուսակցությունը նույնպես դիտարկվել է որպես հետազոտության առարկա:

համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ Եվրոպական խորհրդարանում և խորհրդարանից դուրս արծարծված ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսների միջև:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի համապարփակ ուսումնասիրությամբ: Միևնույն ժամանակ, սույն հետազոտության շրջանակում համաեվրոպական կուսակցությունների և համապատասխան ԵԽ քաղաքական խմբակցությունների դիսկուրսի աշխարհաքաղաքական, ժամանակագրական, արժեքահեն-գաղափարական ու քաղաքական հայեցակետերի քննությունը թույլ է տալիս նորովի իմաստավորել տվյալ ԵՄ քաղաքական դերակատարների գործունեությունը:

Ատենախոսության **գիտական նորույթը** կարելի է ներկայացնել հետևյալ ձևակերպումներում.

- հիմնավորվել է, որ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների քաղաքական և կուսակցական առաջնահերթություններն ազդեցություն են թողել վերջիններիս՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի ձևավորման վրա,
- բացահայտվել են համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի առանձնահատկությունները խորհրդարանական և արտախորհրդարանական համատեքստում,
- հիմնավորվել է, որ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների և ԱլԳ տարածաշրջանի քաղաքական կուսակցությունների փոխհարաբերություններն ու գործընկերությունն էականորեն ազդել են համաեվրոպական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրային գործընթացների ու բարեփոխումների և հատկապես ԱլԳ ներքաղաքական իրողությունների շուրջ հնչեցված կուսակցական դիրքորոշումների վրա,
- ամփոփվել և ընդգծվել են այն գործոնները, որոնք ազդել են համաեվրոպական կուսակցությունների խորհրդարանական գործունեության ձևավորման ու կայացման, ինչպես նաև ԵՄ մակարդակում որոշումների ընդունման ու իրականացման վրա,
- բացահայտվել է, որ վերոնշյալ կուսակցությունների կողմից ԱլԳ ծրագրի դիսկուրսիվ իմաստավորումների (framing, ֆրեյմինգ, շրջանակավորում)[13] ձևավորումը պայմանավորված է ԵՄ անվտանգային համակարգի և աշխարհաքաղաքական դերակատարության շուրջ կուսակցական ու քաղաքական տեսլականներով,

[13] Տե՛ս Mintz A. and Redd S. B. Framing Effects in International Relations // Synthese 135 (2), 2003, pp. 193-213.

- վեր են հանվել արժեքահեն-գաղափարական այն տարրերը, որոնք տեղ են գտել վերոնշյալ կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսում,
- ի հայտ են բերվել համաեվրոպական կուսակցությունների և ԵԽ քաղաքական խմբակցությունների՝ Հայաստանի ու ԼՂ-ի շուրջ արծարծված դիսկուրսիվ իմաստավորումները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքում ձևավորված հիմնական դրույթներն ու եզրակացությունները հնարավորություն են տալիս վերաիմաստավորել ԱլԳ տարածաշրջանում համաեվրոպական կուսակցությունների գործունեությունը և ԱլԳ ծրագրի կուսակցական ու դիսկուրսիվ բաղադրիչների առանձնահատկությունները: Սույն ատենախոսությունը կարող է հիմք ծառայել ԱլԳ ծրագրի, համաեվրոպական կուսակցությունների, Եվրոխորհրդարանի քաղաքական խմբակցությունների և ԵՄ արտաքին քաղաքականության շուրջ գիտական հետազոտությունների համար:

Գործնական նշանակության տեսանկյունից ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ ԱլԳ տարածաշրջանում համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսիվ ռազմավարության ու դերակատարման վերագնահատման և տվյալ միավորների շուրջ քաղաքական կանխատեսումների մշակման համար: Ատենախոսությունը կարող է օգտակար լիներ ՀՀ պետական ինստիտուտների, հայաստանյան կուսակցությունների և հասարակության այլ շերտերի համար տվյալ դերակատարների հետ համագործակցության հաստատման և խորացման, ինչպես նաև ջատագովության և լոբբիստական աշխատանքների իրականացման նպատակով: Ատենախոսությունը կարող է ծառայել համաեվրոպական կուսակցությունների, Եվրոպական խորհրդարանի խմբակցությունների ու տարբեր եվրոպական միջխորհրդարանական հարթակների հետ աշխատանքներ իրականացնող ԱլԳ անդամ երկրների պետական հաստատությունների և քաղաքական միավորների գործունեության բարելավման, ինչպես նաև քաղաքագիտության ու եվրոպագիտության ոլորտներում դասընթացներ կազմակերպելու համար:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Հետազոտությունը կազմված է երեք գլուխներից, յոթ ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ծավալը 196 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև հիմնախնդրի գիտական մշակվածությունը, ատենախոսության մեթոդաբանությունը ու գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Համաեվրոպական կուսակցությունների խորհրդարանական և արտաքին քաղաքական դերակատարության կայացումն ու զարգացումը»** գլխում քննվում են համաեվրոպական կուսակցությունների և ԵԽ քաղաքական խմբակցությունների ձևավորման առանձնահատկությունները և կայացմանը նպաստող պատմաքաղաքական գործոնները: Քննարկվում են համաեվրոպական կուսակցությունների տիպաբանությունը և դերը ԵՄ արտաքին քաղաքականության ձևավորման ու իրականացման գործընթացներում: Տվյալ գլխում կատարված ուսումնասիրությունը փաստում է, որ չնայած քաղաքական գաղափարախոսությունները դառնում են կուսակցությունների կայացման նախապայման, այնուամենայնիվ Արևմտյան Եվրոպայում արդեն իսկ կուսակցությունների՝ տասնամյակների պատմություն ունեցող գաղափարա-խոսական համագործակցությունը, ինչպես նաև առկա միջխորհրդարանական կապերը համաեվրոպական կուսակցական համակարգերի և համապատասխան ԵԽ քաղաքական խմբակցությունների զարգացման հիմքն են: Ի տարբերություն այլ քաղաքական կուսակցությունների՝ համաեվրոպական կուսակցություններն ունեն մի շարք առանձնահատկություններ, ինչպես, օրինակ՝ ներկուսակցական կառուցվածքը, ընդհանուր համաեվրոպական ընտրազանգվածի բացակայությունն ու վերազգայնությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Արևելյան գործընկերության ծրագրի զարգացման քաղաքական, խորհրդարանական և դիսկուրսիվ հայեցակերպը»** գլխում քննության են առնվում ԱլԳ ծրագրի քաղաքական ձեռքբերումներն ու ձախողումները, ծրագրի քաղաքական համագործակցության երկկողմանի, ինչպես նաև բազմակողմանի զարգացման բաղադրիչները: Քննվում է ծրագրի շրջանակում ձևավորված «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի գործունեությունը՝ որպես համաեվրոպական կուսակցությունների, ԵԽ խմբակցությունների և ԱլԳ անդամ երկրների քաղաքական կուսակցությունների համագործակցության խթան: Վերոնշյալ գլխում հետազոտվում է ԵՄ ինստիտուտների կողմից ԱլԳ ծրագրի հանդեպ կիրառված դիսկուրսիվ ռազմավարությունը:

Սույն գլխում համեմատական ուսումնասիրության է ենթարկվում ԱլԳ ծրագրի շրջանակում ԵՄ-ի աշխարհաքաղաքական և նորմատիվային դերակատարությունը՝ փաստելով, որ ժողովրդավարության և կայունության երկընտրանքի առջև ԵՄ-ի ընտրությունը հաճախ կանգ է առնում կայունության վրա: Միևնույն ժամանակ արձանագրվել է, որ «Եվրանեսթ» ԽՎ-ն միակ հարթակը չէ, որի շրջանակում համաեվրոպական կուսակցության անդամները և ԵԽ քաղաքական խմբակցությունները համագործակցում են ԱլԳ անդամ երկրների

կուսակցությունների հետ: ԱլԳ տարածաշրջանի կուսակցությունները ծրագրի զարգացմանը զուգահեռ կարողացել են խորացնել հարաբերությունները համաեվրոպական կուսակցությունների հետ և օգտագործել միջկուսակցական համագործակցության ֆորմալ և ոչ ֆորմալ ուղիները: Հայաստանյան կուսակցությունները նույնպես բացառություն չեն կազմում:

Ատենախոսության երրորդ՝ **«Արևելյան գործընկերության ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսի վերլուծություն»** գլխում համապարփակ քննության է ենթարկվել հետազոտության առարկա համաեվրոպական կուսակցությունների կողմից կիրառված ԱլԳ ծրագրի դիսկուրսիվ իմաստավորումը: Մասնավորապես, առաջին՝ «ԱլԳ ծրագրի աշխարհաքաղաքական իմաստավորումը համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսում» ենթագլխում վեր են հանվել աշխարհաքաղաքական և արտաքին քաղաքական այն հայեցակարգերը, որոնք դարձել են ԱլԳ ծրագրի իմաստավորման հիմնական տարրերը՝ տարածաշրջանում ԵՄ-ի, ներառյալ հակամարտությունների կարգավորման գործընթացներում ներգրավվածությունը, ԵՄ-Ռուսաստան հարաբերությունները, ԱլԳ անդամ երկիր Ուկրաինայի կարևորությունը ԵՄ աշխարհաքաղաքական նպատակների տեսանկյունից, ԵՄ անվտանգության, ներառյալ էներգետիկ անվտանգության հայեցակարգերը և այլն: Տվյալ գլխում կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԱլԳ ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսը փոխկապակցված է աշխարհաքաղաքական համատեքստի մի շարք հայեցակարգերի հետ: Կուսակցությունները կիրառում են աշխարհաքաղաքական համատեքստի դիսկուրսիվ այնպիսի միավորներ, որոնք միտված են ԵՄ ինստիտուտների կողմից իրականացվող քաղաքականությունների խթանմանը, վերափոխմանը և/կամ քննադատմանը: Գաղափարական ու արտաքին քաղաքական տեսլականների տարբերությունները, մասնավորապես եվրոպամետ-եվրոսկեպտիկ առանցքում հետազոտության առարկա կուսակցությունների տեղակայումը, ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի ձևավորման հիմնական գործոններն են: Օրինակ՝ եվրոպամետ և լիբերալ գաղափարախոսության ԵԱԺԴ-ն ու համապատասխան ԵԽ քաղաքական խմբակցությունը աշխարհաքաղաքական համատեքստում ԱլԳ ծրագիրը դիսկուրսիվ մակարդակում դիտարկել են որպես ԵՄ-ի փափուկ ուժի դրսևորում, մինչդեռ եվրոսկեպտիկ և աջ պահպանողական գաղափարախոսությանը հարող ԵՊԲԴ-ն այն դիտարկել է որպես ԵՄ-Ռուսաստան աշխարհաքաղաքական պայքարի հարթակ, մասնավորապես նշելով, որ «*Արևելյան գործընկերությունն երբեք չի եղել Եվրամիության սիրելի զավակը՝ վատ ֆինանսավորվող և վատ իրագործված նախագիծ, որը երբեք չի եղել ԵՄ ռազմավարության կենտրոնում: Զարմանալի չէ, որ այս վերջին քաղաքական փոխհրաձգության մեջ հաղթեց Ռուսաստանը, պարտվեց ԵՄ-ն*»[14]: Ի տարբերություն ԵՊԲԴ-ի՝ այն կուսակ-

[14] MEP Ryszard Antoni Legutko. Outcome of the Vilnius Summit and the future of the Eastern Partnership, in particular as regards Ukraine. Debate, European Parliament, Strasbourg, 10

ցությունները, որոնք Ռուսաստանի հետ համագործակցության կամ առնվազն ոչ մրցակցային հարաբերությունների կողմնակից են, իրենց դիսկուրսում ԱլԳ ծրագիրը իմաստավորել են այլ կերպ:

ԱլԳ ծրագրի կայացման շրջանակում ԵՄ-Ռուսաստան աշխարհաքաղաքական համատեքստում շեշտադրվում են ծրագրի անվտանգային, էներգետիկ ու կայունության բաղադրիչները, և դիսկուրսը կրում է ոչ միայն առճակատման, այլ նաև երկխոսության տարրեր: Կարելի է առանձնացնել Եվրոպայի սոցիալիստական կուսակցության կողմից ձևավորված Սոցիալիստների և դեմոկրատների առաջադիմական դաշինք (ՍԴԱԴ) ԵԽ խմբակցության՝ ԱլԳ ծրագրի համատեքստում Ռուսաստանի դերակատարության շուրջ հնչեցրած գնահատականները: Օրինակ՝ «ՍԴԱԴ՝ Արևելյան գործընկերությունը դեռ ընթացքի մեջ է, բայց այն ունի հաջողության պատմություն դառնալու ներուժ» վերտառությամբ հայտարարությունում, որը հիմնված է ԵԽ պատգամավոր և ՍԴԱԴ-ի արտաքին հարաբերությունների խոսնակ Նութ Ֆլենկեշտեյնի ելույթի վրա, ասվում է.

Միևնույն ժամանակ, պետք է ուշադրություն հրավիրել մեր հարևանների վրա: Մենք կրկնում ենք, որ Արևելյան գործընկերությունն ուղղված չէ որևէ մեկի դեմ: Դա համագործակցության, խաղաղության և համատեղ բարգավաճման նախագիծ է: Ցանկալի արդյունքները պետք է լինեն ոչ թե հանուն Եվրամիության, այլ ի շահ յուրաքանչյուր գործընկեր երկրի քաղաքացիների: Ավելին, անհրաժեշտ է երկխոսություն պահպանել Ռուսաստանի հետ, որը ներգրավված է մեր ընդհանուր հարևանության տարածաշրջանի բազմաթիվ հակամարտությունների մեջ[15]**:**

Տվյալ ենթագլուխում կատարված վերլուծությունը բացահայտում է, որ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունները ԱլԳ ծրագիրը դիտարկել են նաև այնպիսի աշխարհաքաղաքական համատեքստում, ինչպիսին ԵՄ-Թուրքիա և ԵՄ/Արևմուտք-Իրան հարաբերություններն են՝ չնայած որ տվյալ դիտարկումը հազվադեպ է հանդիպում և արծարծվում է հիմնականում որոշ ԱլԳ անդամ երկրներին ու տարածաշրջանի հակամարտություններին առնչվող դրվագներում: Այնուամենայնիվ, համաեվրոպական կուսակցությունները, անկախ ԵՄ-Ռուսաստան հարաբերությունների իրենց տեսլականից, գտնում են, որ ԱլԳ անդամ երկրների միջազգային պարտավորությունները, ինչպես նաև տարածաշրջանում Ռուսաստանի դերակատարությունը պետք է լինեն ԵՄ ուշադրության կենտրոնում:

Տվյալ գլխի երկրորդ՝ «ԱլԳ ծրագրի արժեքահեն և գաղափարական իմաստավորումը համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսում» ենթագլխում բացահայտվել է, որ արժեքահեն համատեքստը եղել է

December 2013. https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-7-2013-12-10-ITM-014_EN.html (last access 25 July 2023).

[15] S&D Press. S&Ds: the Eastern Partnership is still in process, but it has the potential to become a success story. 2017. https://www.socialistsanddemocrats.eu/newsroom/sds-eastern-partnership-still-process-it-has-potential-become-success-story (last access 24 July 2023).

ինչպես եվրոպամետ, այնպես էլ եվրոսկեպտիկ համաեվրոպական կուսակցությունների և ԵԽ քաղաքական խմբակցությունների դիսկուրսի առարկա: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչ 2013 թ. ԱԼԳ վիլնյուսյան գագաթնաժողովը արժեքահեն դիսկուրսը եղել է առանձնակիորեն ընդգծված: Տվյալ դիսկուրսում առանձնանում են այնպիսի հայեցակարգեր, ինչպիսիք են *ԵՄ-ի փոխակերպիչ ուժը, եվրոպական սպանդարտներն ու նորմերը, ժողովրդավարեցման գործընթացը, մարդու իրավունքները* և այլն: Ծրագրի իմաստավորման համար կիրառված վերոնշյալ արժեքները հաճախակիորեն նույնականացվել են արևմտամետության հետ և ներկայացվել «եվրոպական արժեքներ» հայեցակարգի ներքո: Որոշ դեպքերում նկատելի է կուսակցությունների՝ ԱԼԳ ծրագրի շուրջ դիսկուրսի արժեքահեն համատեքստում արծարծված վերոնշյալ հայեցակարգերի, ժողովրդավարության առաջխաղացման կարևորության և աշխարհաքաղաքական համատեքստում շեշտադրված Ռուսաստանի ապակայունացնող դերի շուրջ դիսկուրսիվ իմաստավորումների համադրությունը: 2021 թ. ԵԿԿ կուսակցության կողմից ընդունված բանաձևը կարող է կիրառվել վերոնշյալ եզրահանգումը հիմնավորելու նպատակով: Այդ բանաձևում մասնավորապես նշվում է.

Ռուսաստանի կառավարությունը շարունակում է իր քաղաքական և տնտեսական ազդեցության փորձերը Արևելյան գործընկերության երկրների և Ռուսաստանի հետ պատմական կամ մշակութային կապեր ունեցող երկրների նկատմամբ՝ խոչընդոտելով այդ երկրների ուղին դեպի ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, երբեմն սպառնալով նրանց ինքնիշխանությանը և հասցնելով անուղղելի վնաս[16]:

Տվյալ ենթագլխում ընդգծվում է, որ ԱԼԳ-ի արժեքահեն իմաստավորումը վերոնշյալ կուսակցությունների նախաձեռնությունը չէ, այլ ի հայտ է եկել ԵՄ ինստիտուտների կողմից ծրագրի մեկնարկից ի վեր: Վեր է հանվել այն հանգամանքը, որ արժեքահեն համատեքստի կիրառումը ԱԼԳ անդամ երկրների ներքաղաքական իրողությունների պարագայում դրսևորվել է մի շարք տարբերություններով: Այն համաեվրոպական և հատկապես եվրոսկեպտիկ կուսակցությունները, որոնք չունեն կամ ունեն քիչ քաղաքական գործընկերներ ԱԼԳ տարածաշրջանում, արժեքային համատեքստում ԱԼԳ ծրագրի անդամ երկրների ներքաղաքական իրողություններին անդրադառնալիս հակված են եղել դիրքավորվել որպես անաչառ միջնորդ: Տվյալ ենթագլուխը բացահայտում է, որ համաեվրոպական կուսակցությունները և ԵԽ քաղաքական խմբակցությունները ԱԼԳ ծրագրի շուրջ դիսկուրսիվ մոտեցումներ մշակելիս աշխարհաքաղաքական համատեքստում նախընտրում են դրանք ուղղել ԵՄ արտաքին քաղաքականություն մշակողներին և որոշում կայացնողներին, իսկ արժեքահեն-գաղափարական

[16] European Greens. Future relations with Russia must be based on values, the rule of law and fundamental rights. 2021. https://europeangreens.eu/resolutions/futurerelations-russia-must-be-based-values-rule-law-and-fundamental-rights/ (last access 1 September 2023).

համատեքստում, որպես վերոնշյալ դիսկուրսի թիրախներ, ի հայտ են գալիս նաև ԱլԳ անդամ երկրների քաղաքական վերնախավերը:

Վերոնշյալ գլխի երրորդ՝ «Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսում» ենթագլխում կատարված վերլուծության արդյունքում վեր են հանվել Հայաստանի ու ԼՂ-ի շուրջ իմաստավորման հիմնական տարրերը, ինչպես նաև այն գաղափարական և կուսակցական գործոնները, որոնք նպաստել են տվյալ դիսկուրսիվ մոտեցումների ձևավորմանը: Համեմատության է ենթարկվել կուսակցությունների՝ խորհրդարանական և արտախորհրդարանական համատեքստում ՀՀ-ի և ԼՂ-ի շուրջ արծարծված դիսկուրսները: Բացահայտվել է, որ փոքր ու նվազ կայացած կուսակցություններն ու ԵԽ խմբակցություններն ավելի քիչ են անդրադարձել ԼՂ-ին՝ չնայած որ, ինչպես և ավելի մեծ ու կայացած համաեվրոպական կուսակցություններն ու ԵԽ խմբակցությունները, նույնպես հակամարտության շուրջ դիսկուրսում արտացոլել են իրենց գաղափարական և արտաքին-քաղաքական տեսլականները: Այսպես, Թուրքիայի մշտական քննադատ և եվրոպական ու քրիստոնեական ժառանգությունն իր գաղափարախոսությունում շեշտադրող ԻԺԿ կուսակցության անդամ ու Եվրոխորհրդարանի պատգամավոր Սիլիա Սարդոնեն համապատասխան ԵԽ խմբակցության անունից 2020 թ. ԼՂ հետպատերազմյան իրավիճակի քննարկման ընթացքում նշում է, որ «*ամոթալի է, որ Եվրոպան իր ձայնը չի բարձրացնում այն էթնիկ և կրոնական զտումների դեմ, որին ենթարկվում է քրիստոնյա Հայաստանը՝ Ադրբեջանի և Թուրքիայի իսլամիզմի հարվածների ներքո*»[17]:

ԵԱԴ-ն միակ կուսակցությունն է, որի դիսկուրսը ԼՂ-ի շուրջ առանձնակիորեն տարբերվում է մյուս կուսակցություններից: Կուսակցության դիսկուրսում առկա է անդրադարձ 2014 թ. հուլիսյան իրադարձություններին, ինչպես նաև ԼՂ-ում ադրբեջանական ուժերի կողմից զինադադարի խախտումներին: Ինչպես մեզ տված հարցազրույցում նշում է ԵԿԿ/ԵԱԴ խմբակցության անդամ և ԵԽ պատգամավոր Մարկետա Գրեգորովան, ԼՂ հիմնահարցի շուրջ առկա են նկատելի տարբերություններ «Եվրոպական կանաչներ» և «Եվրոպական ազատ դաշինք» կուսակցությունների միջև, ինչը հաճախ թույլ չի տվել ԵԿԿ/ԵԱԴ խմբակցությանը հանդես գալ ԼՂ հակամարտության շուրջ համապարփակ դիրքորոշմամբ[18]: Ի տարբերություն մյուս համաեվրոպական կուսակցությունների՝ ԵԱԴ-ն՝ որպես ԼՂ հակամարտության վրա ամենամեծ ազդեցություն ունեցող դերակատար նշում է Թուրքիային, մինչդեռ այլ կուսակցությունների դեպքում այդ դերակատարը Ռուսաստանն է: Իսկ Եվրոպական միացյալ ձախեր/Սկանդինավյան ձախ

[17] MEP Silvia Sardone. Prisoners of war in the aftermath of the most recent conflict between Armenia and Azerbaijan. Debate, European Parliament, Strasbourg, 20 May 2021. https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2021-05-20-ITM-010-01_EN.html (last access 24 July 2023).

[18] Եվրոպայի կանաչներ կուսակցություն/ Եվրոպական ազատ դաշինք խմբակցության պատգամավոր Մարկետա Գրեգորովա, հարցազրույց, 8 դեկտեմբեր 2021 թ.:

կանաչներ խմբակցությունը (ԵՄԶ/ՍԶԿ), որի կազմում ներառված է Եվրոպական ձախերի համաեվրոպական կուսակցությունը, չնայած որ ԼՂ հակամարտության շուրջ իր դիսկուրսում նույնպես անդրադառնում է Ռուսաստանի և Թուրքիայի ապակայունացնող դերակատարությանը, այնուամենայնիվ շեշտադրում է նաև ԵՄ քաղաքականության ձախողումը և համապատասխան արտաքին քաղաքական փոփոխություններ իրականացնելու կարևորությունը: Այսպես, օրինակ՝ Եվրոխորհրդարանում ԼՂ 44-օրյա պատերազմին նվիրված քննարկման ընթացքում ԵՄԶ/ՍԶԿ խմբակցության անունից Եվրոխորհրդարանի պատգամավոր Իդոլա Վիլանուևա Ռուիզը նշում է.

ԵՄ-Ն պետք է ներգրավվի համակարգված կերպով՝ համագործակցելով տարածաշրջանային մարմինների, քաղաքացիական հասարակության և հարևան երկրների հետ: Հարևանության տասնյոթ տարվա քաղաքականությունից հետո մենք ավելի շատ հակամարտություններ ունենք մեր սահմաններին: Եվրոպական երկրները տարածայնություններ ունեն իրենց արտաքին քաղաքականության հարցում. Եվրամիությունն արտաքին աշխարհում գնալով ավելի երկրորդական դեր է ստանձնում[19]*:*

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, մասնավորապես՝

- ԱլԳ ծրագրի շրջանակում համաեվրոպական կուսակցությունները հետապնդում են մի քանի հիմնական նպատակ, մասնավորապես ԵՄ արտաքին քաղաքականության առաջխաղացումը, իրենց քաղաքական ազդեցության ուժեղացումը և միջկուսակցական համագործակցության ու փոխազդեցության լծակների զարգացումը: Ամենամեծ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունները հետապնդում են հավելյալ նպատակ՝ հավանական անդամ կուսակցությունների եվրոպականացումը և համապատասխանեցումը ԵՄ քաղաքական համակարգի չափանիշներին, ինչպես նաև ԵՄ տարածաշրջանային ծրագրերով նախատեսված բարեփոխումների խթանումը:
- Համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի նմանություններն ու տարբերությունները պայմանավորված են ինչպես կուսակցական տիպաբանության եվրոպամետ-եվրոսկեպտիկ, այնպես էլ աջ-ձախ առանցքներում տեղակայմամբ: Գաղափարական նմանությունը ԱլԳ ծրագրի շուրջ միևնույն դիսկուրսիվ իմաստավորման պայման չէ:
- Միակ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունը, որի դիրքորոշումն ամենաշատն է տարբերվում ԵՄ ինստիտուցիոնալ մոտեցումից, եվրոսկեպտիկ ուղղվածություն ունեցող ԻԺԿ-ն է: ԻԺԿ-ի արտաքին

[19] MEP Idoia Villanueva Ruiz. The resumption of hostilities between Armenia and Azerbaijan in relation to the Nagorno-Karabakh conflict. Debate, European Parliament, Brussels, 7 October 2020. https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-10-07-ITM-005_EN.html (last access 23 July 2023).

քաղաքական դիսկուրսում ԱլԳ ծրագիրը հանդես է գալիս բացասական լույսի ներքո և դիտարկվում որպես ԵՄ ֆինանսական միջոցների վատնում ու Ռուսաստանի վրա ճնշման գործիք: Մյուս համաեվրոպական կուսակցությունները, թեև քննադատում են ԱլԳ-ի որոշ բաղադրիչներ ու ծրագրի իրականացման ընթացքը, այնուամենայնիվ դրականորեն են իմաստավորում այն:

- ԱլԳ ծրագրի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսն առաջին հերթին պայմանավորված է կուսակցության ԵՄ հարևանության, ԵՄ ընդլայնման, ԵՄ կայունության ու անվտանգության և ԵՄ-Ռուսաստան հարաբերությունների տեսլականով: Չնայած որ վերոնշյալ կուսակցությունների քաղաքական գաղափարախոսությունն ազդեցություն է թողնում ԱլԳ ծրագրի դիսկուրսիվ իմաստավորման վրա, այնուամենայնիվ այն կրում է ոչ առաջնային դեր:
- ԱլԳ ծրագրի շուրջ ամենահաճախ կիրառված դիսկուրսիվ համատեքստը ԵՄ-Ռուսաստան հարաբերություններն են: Ծրագրի կայացման շրջանում, չնայած որ կուսակցությունները հնչեցրել են քննադատություններ Ռուսաստանի հանդեպ, այնուամենայնիվ ընդգծվել է, որ ԱլԳ-ն ՌԴ-ի դեմ ուղղված նախաձեռնություն չէ: Միակ կուսակցությունը, որն իր դիսկուրսում իմաստավորում է ԱլԳ-ն որպես ԵՄ-Ռուսաստան պայքարի հարթակ և ջատագովում ծրագրի դիտարկումը աշխարհաքաղաքական մրցավազքում, ԵՊԲԴ-ն է:
- Խորհրդարանական համատեքստում՝ ԵԽ քաղաքական խմբակցությունների մակարդակում, համաեվրոպական կուսակցություններն ավելի հաճախ են անդրադարձել ԱլԳ ծրագրին, քան արտախորհրդարանական համատեքստում: Վերջինս պայմանավորված է խորհրդարանական մակարդակում կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրում ավելի խորքային ներգրավմամբ:
- Ամենամեծ երեք համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունները՝ ԵԺԿ-ն, ԵՍԿ-ն ու ԵԱԺԴ-ն ամենահաճախն են անդրադառնում ԱլԳ ծրագրին՝ ի ցույց դնելով այն փաստը, որ ինչքան կայացած ու ազդեցիկ է կուսակցությունը ԵՄ քաղաքական մակարդակում, այնքան ավելի շատ է անդրադառնում ԱլԳ ծրագրին ու ծրագրի անդամ երկրներին:
- 2013 թ. ԱլԳ վիլնյուսյան գագաթնաժողովը, գագաթնաժողովին անմիջապես նախորդող ժամանակաշրջանն ու 2014 թ. ուկրաինական ճգնաժամը համաեվրոպական կուսակցությունների և ԵԽ համապատասխան խմբակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի վերափոխման ամենաազդեցիկ իրողություններն են:
- ԱլԳ ծրագրի շուրջ ամենահաճախ կիրառվող արժեքահեն իմաստավորումները շրջանառվում են «մարդու իրավունքներ», «ժողովրդավարություն», «օրենքի գերակայություն», «համագործակցություն», «համերաշխություն» և «կայունություն» հայեցակարգերի շուրջ: ԱլԳ ծրագրի շուրջ արժեքահեն համատեքստը բազմիցս փոխկապակցվել և/կամ

համադրվել է ծրագրի շուրջ աշխարհաքաղաքական համատեքստի հետ: Սա բնորոշ է բոլոր համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսին, և այս համադրումը հատկապես ակներև է դառնում 2013 թ. ԱլԳ վիլնյուսյան գագաթնաժողովին հաջորդած ժամանակաշրջանում:

- ԱլԳ ծրագրի արժեքահեն համատեքստում տեղ գտած հայեցակարգերը մեծ մասամբ արտացոլում են ԵՄ ինստիտուտների հռետորաբանությունը՝ բացառությամբ կուսակցական գաղափարախոսության որոշ տարրերի, որոնք համեմատաբար ավելի քիչ են հանդիպում: Համաեվրոպական կուսակցությունները հաճախ նույնականացնում են ժողովրդավարության ձգտումն ու արևմտամետությունը: Բացառություն է ԻԺԿ-ն, որը ԱլԳ-ի ժողովրդավարական հայեցակարգը համեմատում է ԵՄ արտաքին միջամտության գործիքակազմի հետ:
- Համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի դիսկուրսիվ իմաստավորման որոշ տարրեր ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ արժեքահեն-գաղափարական համատեքստում արտացոլում են ԱլԳ տարածաշրջանի գործընկեր քաղաքական կուսակցությունների մոտեցումները՝ ի ցույց դնելով տվյալ գործընկերության ազդեցության մակարդակը վերոնշյալ կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսի վրա:
- Համաեվրոպական կուսակցությունները Հայաստանը իմաստավորել են տարածաշրջանային, ՀՀ-Եվրոպա հարաբերությունների, ԱլԳ ծրագրի և «Համապարփակ ու ընդլայնված գործընկերության համաձայնագրի», ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցող ներքաղաքական զարգացումների ու ընթացող բարեփոխումների համատեքստում: Այնուամենայնիվ, ի տարբերություն ԱլԳ անդամ «Ասոցացված եռյակ» երկրների (ներկայումս ԵՄ անդամ թեկնածու երկրների), այն ավելի քիչ է հիշատակվել կուսակցությունների՝ ԱլԳ ծրագրի շուրջ դիսկուրսում:
- ԼՂ հիմնահարցի շուրջ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսը համընկել է ԵՄ ինստիտուցիոնալ դիսկուրսում տեղ գտած շեշտադրումների հետ, մասնավորապես կարևորվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի դերակատարումն ու ԵՄ-ի՝ հակամարտության կարգավորման մեջ ակտիվ ներգրավվածության անհրաժեշտությունը: Վերոնշյալ կուսակցությունների մեծամասնությունն իրենց դիսկուրսում մատնանշել է Ռուսաստանին և Թուրքիային՝ որպես հակամարտությունն ապակայունացնող դերակատարների, իսկ եզակի դեպքերում (մասնավորապես ԵԿԿ կուսակցության պարագայում)՝ Իրանին: ԵԱԴ-ն միակ կուսակցությունն է, որը հակամարտության կարգավորումն իր դիսկուրսում բացառապես հիմնում էր ԼՂ ինքնորոշման իրավունքի վրա:

ԱլԳ ծրագրի իմաստավորումը համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսում ամփոփված է ատենախոսության վերջում ներառված համապարփակ աղյուսակում, որտեղ ներկայացված են յուրաքանչյուր

համաեվրոպական խորհրդարանական կուսակցության կողմից ԱԼԳ ծրագրի շուրջ ամենահաճախ կիրառված դիսկուրսիվ իմաստավորման հայեցակարգերը:

Ատենախոսության հիմնադրույթները արտացոլվել են հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Մխիթարյան Ս., ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիրը Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինքի դիսկուրսում // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, № 3 (39), 2022, էջ 91-99:
2. Mkhitaryan S., The EU Eastern Partnership program in the discourse of "Progressive alliance of Socialists and Democrats" political group of the European Parliament // "Region and the world" scientific-analytical journal volume XIII, № 1, 2022, pp. 20-27.
3. Մխիթարյան Ս., Համաեվրոպական կուսակցությունների ձևավորման գործընթացը և տիպերը // Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, № 1 (25), 2021, էջ 134-141:
4. Մխիթարյան Ս., Արևելյան գործընկերության ծրագրի զարգացման քաղաքական, խորհրդարանական և դիսկուրսիվ ասպեկտների շուրջ // Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, № 2 (26), 2021, էջ 117-126:
5. Մխիթարյան Ս., Համաեվրոպական կուսակցությունների դերը ԵՄ արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացներում // «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, № 2 (13), 2021, էջ 141-152:
6. Մխիթարյան Ս., Արևելյան գործընկերության ծրագրի շուրջ Եվրոպայի ժողովրդական կուսակցության դիսկուրսի որոշ առանձնահատկությունների շուրջ // «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, № 6 (17), 2021, էջ 92-104:

МХИТАРЯН СОНА МИСАКОВНА
ДИСКУРС ОБЩЕЕВРОПЕЙСКИХ ПАРЛАМЕНТСКИХ ПАРТИЙ О ПРОГРАММЕ ВОСТОЧНОГО ПАРТНЕРСТВА ЕС

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 - "Политические институты и процессы". Защита состоится 20 сентября 2024 г. в 13:00 часов на заседании специализированного совета 056 "Политология и международные отношения" ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

Резюме

В результате нынешней геополитической трансформации программа ЕС «Восточное партнёрство» (далее - ВП) переходит в новую стадию, оказывая влияние на отношения между ЕС и государствами-членами ВП, парадигмы региональной безопасности, а также концепцию политических и экономических реформ стран-участниц программы. Вышеперечисленная трансформация выдвигает необходимость углубленного и всестороннего изучения программы, которое привлекает внимание научного сообщества не только к макрополитическим изменениям ВП, но и к микрополитическим единицам, способствующим развитию и преобразованию программы, включая роль общеевропейских партий.

Во введении обосновывается актуальность темы исследования, цели и задачи диссертации, объект и предмет исследования, а также научная новизна и возможные направления её теоретического и практического применения.

Актуальность исследования обусловлена важной ролью общеевропейских партий в разработке и реализации внешней политики ЕС и недостаточно изученным сотрудничеством этих политических единиц с партиями стран-членов ВП на протяжении более десяти лет. Хотя общеевропейские партии являются единственными подобными западными политическими партнёрами партийной системы РА, малочисленность исследований их деятельности в регионе ВП делает эту тему исследования особенно актуальной. В условиях перехода ВП на новый этап развития, совпадающего с внутриполитическими трансформациями в странах-участницах ВП и острой конкуренцией между различными геополитическими центрами в регионе, изучение данной темы приобретает особое значение.

Цель диссертации – изучить дискурс общеевропейских парламентских партий о программе «Восточное партнёрство».

Методологической основой диссертации служат методы качественного анализа, а именно: анализ документов, контент-анализ и критический дискурс-анализ и ряд других методов, необходимых для достижения поставленных задач.

С точки зрения **практической значимости**, результаты диссертации могут быть использованы государственными учреждениями Армении, политическими партиями и другими слоями общества для установления и углубления сотрудничества с общеевропейскими партиями, а также для осуществления адвокации и лоббистской деятельности. Диссертация может способствовать совершенствованию деятельности государственных институтов и политических структур стран-членов ВП, работающих с общеевропейскими партиями, фракциями Европейского парламента и различными европейскими межпарламентскими платформами, а также для организации курсов в области политологии и европейских исследований.

В первой главе диссертации, под названием «Становление и развитие парламентской и внешнеполитической роли общеевропейских партий», исследуются особенности формирования общеевропейских партий и политических фракций Европейского парламента. Рассматриваются типология общеевропейских партий и их роль в формировании и реализации внешней политики ЕС.

Во второй главе диссертации, под названием «Политические, парламентские и дискурсивные аспекты развития программы Восточного партнерства», анализируются политические достижения и неудачи программы ВП, деятельность Парламентской ассамблеи «Евронест», сформированной в рамках программы, а также дискурсивная стратегия, используемая институтами ЕС в отношении программы ВП.

В третьей главе диссертации, озаглавленной «Анализ дискурса общеевропейских партий о Восточном партнёрстве», рассматриваются геополитические и ценностные интерпретации Восточного партнёрства, а также дискурсивный фрейминг Армении и Нагорного Карабаха.

SONA MKHITARYAN

THE DISCOURSE OF PAN-EUROPEAN PARLIAMENTARY PARTIES ON EU EASTERN PARTNERSHIP PROGRAM

Dissertation under 23.00.02 - "Political Institutions and Processes" aspiring to earn Ph.D. in Political Science. The public defense will take place on September 20, 2024 at 13:00 at the Yerevan State University, at 056 "Political Science and International Relations" HAC Specialized Chamber session (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia.

Abstract

As a result of the current geopolitical transformation, the EU Eastern Partnership program (hereinafter - EaP) is entering a new phase, influencing the relations between the EU and the member states of the EaP, regional security paradigms, as well as the concept of political and economic reforms of the countries participating in the program. The above transformation emphasizes the need for an in-depth and more comprehensive study of the program, drawing the attention of the scientific community not only to the macropolitical aspects of the EaP, but also to the role of micropolitical units, including pan-European parties, contributing to its development and transformation.

In the **Introduction,** the relevance of the study topic is justified, the goals and objectives of the dissertation, the object, and the subject of the study as well as scientific novelty and possible directions of its theoretical and practical application are defined.

The relevance of the study is due to the important role of pan-European parties in the development and implementation of EU foreign policy and the insufficiently studied cooperation of these political units with the political parties of the EaP member states for more than ten years. Although pan-European parties are the only such western political partners of the RA party system, the lack of research of their activities in the EaP region makes the research topic especially relevant. In the conditions of the entry of the EaP into a new stage of development, which coincides with internal political transformations in the EaP member countries and fierce competition between various geopolitical centers in the region, the study of this topic acquires special importance.

The purpose of the dissertation is to examine the discourse of pan-European parliamentary parties on the Eastern Partnership program.

The methodological basis of the dissertation is grounded in qualitative analysis methods, namely: document analysis, content analysis and critical discourse analysis, as well as several other methods necessary for addressing the set objectives.

In terms of **practical significance,** the results of the dissertation can be used by state institutions of Armenia, political parties, and other sectors of society to establish and deepen cooperation with pan-European parties, as well as to carry out advocacy and lobbying activities. The dissertation can contribute to the improvement of the activities of state institutions and political units in the EaP countries, working with pan-European parties, factions of the European Parliament and various European inter-parliamentary platforms, as well as to the organization of courses in the field of political science and European studies.

The first chapter of the dissertation, entitled "Establishment and development of the parliamentary and foreign policy role of pan-European parties" examines the peculiarities of the formation of pan-European parties and political factions of the European Parliament. The typology of pan-European parties and their role in the shaping and implementing of EU foreign policy are examined.

In the **second chapter** of the dissertation, entitled "The Political, Parliamentary and Discursive Aspects of the Development of the Eastern Partnership Program", the political achievements and failures of the EaP program, the activities of the "Euronest" Parliamentary Assembly formed within the framework of the program as well as the discursive strategy used by the EU institutions towards the EaP program are examined.

In the **third chapter** of the dissertation, entitled "The Analysis of the Discourse of pan-European parliamentary parties on Eastern Partnership" the geopolitical and value-based interpretations of the EaP as well as the discursive framing of Armenia and Nagorno-Karabakh are examined.